

տայ ազգի մեղաւորի և լցելց մեղօք, զի յոտից մինչև զգլուխ ոչ դոյր 'ի մեղ, ովկութիւն։ Զայս ամենայն կրեալ և տեսեալ թագաւորն Գէորգի՝ զի ոչ ուստեք զոյր ակնկալութիւն փրկութեան, եդ զողի իւր 'ի ձեռին իւրում, և շոգաւ առ Առլսանն Մէկիք Շահ։ և եգիտ շնորհս առաջի նորա, և պարգևաք անդրէն դարձաւ և դաշամբ խաղաղութեան, միայն զի հնաղանդութեամբ

հարկի հոգ տարցի և մի երկիցէ։ Սակայն զի շարութիւնք մեր 'ի մեղ էին, 'ի Զատկի տօնին ոչ ետ մեղ ցնծալ յարութեամբն Քրիստոսի՝ մեղըն մեր բազմացեալ քանզի հայեցաւ Տէրյերկիր բարկութեամբ, և դողացոյց զսա 'ի հիմանց զի լերինք վիմեղէնք իբրև ըզփոշի հեղան, քաղաքք և զիւղք և եկեղեցիք տապալեցան, և դարձաւ տօնն մեր 'ի սուգ՝ ըստ զրեցելումն։

Շարունակելի։

Խոշոշ : Խոկ Վարիթանդ ասէ. « Տուեալ Գրի. գորի առ Թագաւորն (Գէորգի) զքաղաքամուրն Կարս չըշակայովքն հանդերձ՝ ողջունեալք

մեկնեցան յերերաց, և եթող Թագաւորն 'ի կարս ազնաւորս Շաւշեթոյ և դարձաւ յերկիր իւր »։

ԱՆԴՐԱՆԻԿ ՀԱՅ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆՑ

ՄԱՐՏԻՐՈՍՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ՀՐԻՓՍԻՄԵԱՅ

(Անական թարերգութիւն. հանեալ 'ի Հասարակաց Գրասանէն վենեակոյ)։

(ՏԵս Էջ 33)։



ԵՐՐՈՐԴ ՆԵՐԳՈՐԾՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱՐԱՆ Ա.

ՀՐԻՓՍԻՄ, Գատնակ

(Հարսնական զքեստիւք զարգարեալք և առ գրան տահարի կող)։

Գայիհանէ. Ապա առ հարսանիս գնամք, Հռիփսիմէ.
Զարգարեալ եմք, և այս տաճար է,
Ռոր պարտիս Անահմայ Հանդիսապէս զոհել,
Հոհիսիսիմէ. Ասա, ուր զինահիս կամիմ խորտակել,
ԶԱրամազդ, զֆալկոն և զայլ գիս.
Այս կերպիւ կամիմ տանել զիարսանիս,
Կոապաշտութիւն մեռցի, ժամանակ է.
Ցոյժ երկար ժամանակ այս երկրի տիրէ.
Վերջն ունիցի, պարտ է, թէ Մովսիսի

Առաջ սուրբ օրէնք՝ օրինաց Քրիստոսի
Խրաւաբար զտեղի թողին և մեռան,
Որպէս տովորի ՚ի գալ արեդական
Կորնչիլ ատուերն, ծրջափ յաւէտ դիւաց
Մարթէ է ժէ կորնչին օրէնք անօրինաց:
Յուսամ մեր ևս ընկերաց արիւն յետին եղիցի
Զոր սըրտմտութիւն գիւապաշտից՝ կորցն աստ ընծայեցէ:
 Գայիանէ.
 Հսկիսիմէ.
 Կարծեմ թէ Տրդատ այնմ ոչ սպասէ:
 Կոյր, զմեծն գրիգոր այնչափ տանջեաց
 Եւ ոչ բնաւ փոխել ըզնա կարաց.
 Եւ այսպէս յուսով յուսոյ զիս պղծել.
 Յայնժամ գիտասցես զինչ զիտեմն առնել.
 Ազա ես փախեայ և անփոյթ արարի
 Զիմաս կայսեր, զտիրելն աշխարհի,
 Առ ՚ի գերի լինել Հայոց արքային: . . .
 Թափօրն գայ, ձայնք ևս լին
 Սըրբապիղծ քրմացն լաւ է մեզ հեռանալ
 Թողով թէ մոցեն, և յետոյ գալ:

ՏԵՍԱՐԱՆ Բ.

(Թափօր քրմաց, որք երգելով և խաղալով՝ ածեն հանդիսապէս զայծ՚ի զոհել. առ որում հետեւն):

Տըռաք, Քըմազ, Կարէն, Տիտան, Քըսունք, ՆԻ ԱՑԼ

Գունդք քրմացն երգեն.

Երգեսցուք այսօր — Ամենակարող հօր
 Անմահ Արամազդայ, — Եւ մեծ Անահտայ
 Ամենագութ մօր — Երգեսցուք այսօր:
 Խնամողք աշխարհիս — Պարգևողք բարեաց,
 Լուարուք ձայնիս — Քոյց տօնախմբողաց:
 Արք ՚ի մէջ անմահիցն — Զաստեղս լուսաւորէք,
 Առ մեզ ՚ի յերկնից — Զհիմէն ուղարկեցէք:
 Ե՛կ հիմէն պանծալի — Ե՛կ հիմէն ըզձալի,
 Ընդ մեծին Տըրդատայ — ԶՀոկիսիմէ զուգեա:
 Զեղ այսօր զոհեմք, — Աստուածք Հայոց.
 Տնկք զոր խընդրեմք — Աղաշանաց մերոց:
 Եկեսցէ պանծալի — Աստուած՝ պրակի.
 Ե՛կ սիրելի հիմէն — Ե՛կ ցանկալի հիմէն,
 Դու որ Արամազդայ — ԶԱնահիտ ետուր,
 ԶՀոկիսիմէ ևս տուր — Արքային Տըրդատայ:
 Երգեսցուք այսօր — Ամենակարող հօր
 Անմահ Արամազդայ — Եւ մեծ Անահտայ
 Ամենագութ մօր, — Երգեսցուք այսօր:

Տըրդատ. Ոչ եկն Հոկիսիմէ, մեծամեծ Արամազդ,
 Նա խոստացեալ էր յառաջ հասանիլ աստ.
 Թէ փոփոխեալ էր . . .

ՀԹԻՒԹԵՐԵ, ԳԱՅԻԱՆԵ, ՏՐԵՎԱ, ԿԱՐԷՎ, ՏԻՄԱՅ, ՔՐԵԱԿԵ, ՔՐՈՇՈՒՔ.

(Հայիստմբ հանելով՝ ՚ի թագստենէն):

- Հայիստմբ.** Փոխիլ քառ լիցի .
 Զոր եղէ՝ եմ, և առաջ եկի՝ ըստ խոստմանց իմոց .
Տրդատ. Թուղ երկիւղի իմոց,
 Հանապազ երկիւղ՝ է կցորդ սիրոյ:
Հայիստմբ. Արգեղք պատճառ ունէիր երկընչիլ
 Ույժմտեցես:
- Քրմապետ.** Ճամանակ է մատչիլ.
 Պատրաստեալ է զոհ:
- Հայիստմբ.** Ինքո՞՝ ՚ի զլորիլ
 Տաճարիս և կռոց՝ պատրաստ լեր փախչիլ:
Քուրմ մի Փախիցուք, եղարք, շինուածքս անկանի:
Հայիստմբ. Շուտ, պիղծ Անահիտ, Աստուծոյ ճշմարտի
 Որ բնակէ ՚ի մեղ՝ աստ երկրպագեաց.
 Կարշշ ևս Արամազդ, Փալկոն խարեբայ,
 Եւ զու այլ կուռք՝ յերկիր անկանիցիք:
 Անիծածք և զեք որ աստ բնակէք,
 Եւ մասնէք ՚ի կորուստ զարարածս Աստուծոյ,
 Գնեալս արեամի Միամնի Արդոյ,
 Գողք՝ որ զպաշտօն առնուք նենգութեամք՝
 Միայն արարյին, պարտեալ ապստամիք,
 Արագ դարձարուք յատակ գժոխոց,
 Թողլով անսասան զաշխարհը Հայոց .
Հրամայեմ ևս անսուամբ Յիսուսի,
 Զեր Ցեառն արքայի, ասեղծողի, յաղթողի,
 Որոյ գորացեալ սիրով՝ ձեզ յաղթեմ,
 Եւ ՚ի ձեր զագիր պատկերս զձեզ անարդեմ,
 Որ իշխէք զպատկերս Աստուծոյ խափանել,
 Վիշասլք զարշելիք, անսուամի կուսին,
 Որ երանի պաղով իւր որովայնին
 Զցանկալի մեղ ետ զփրկիչն տիեզերաց,
 Եւ ձեր մեղաբուխ զլուխը ջախչախեաց,
 Զձեզ, աղախին նորա և կոյս՝ կոխեմ:
 Դու Քդիստոս փեսայ, որով յաղթահարեմ
 Զկուռս, զդես, զդժօխս, զանհաւատ բռնաւորս,
 Կենաց իմոց ընկալ զընծայս բանաւորս .
 Մի թողուր առաւել թէ աստ սիրեալ
 Ուր ատիլ կամէի, ՚ի քէն հեռացեալ
 Թշուռառապէս մնամ:
- Գայիստմբ.** Օրհնեալ ՚ի բարձանց
 Մեծ անուն Աստուծոյ, որ ՚ի ձեռն կանանց
 Զօրութիւն իւր երեցուցանէ,
 Եւ ՚ի ձեռն տկարաց՝ զհզօրս խոնարհ առնէ:

- Քրմապետ.** Ամենայար կախարդք. քրմունք, իշխանք, արքայ, Այժմ երկիր բացցի, երկին որոտայ. Վը ժխնդիր լեռուք փութով աստուածոց:
Տրդատ. Ըմբռնեցէք զնոսա. առաջի աշաց իմոց
 Ամբարիչուն կարաց այնչափ իշխել,
 Որ խոստացեալ էր 'ի տաճարն զոհել:
Հսկիսիմեկ. Զոհել 'ի տաճարն խոստացեալ էի,
 Մոլորիս, ստապաշտ. այս յոյժ հեռի
 Միշտ եղև յինչն և 'ի մասց իմոց.
 Որդ 'ի ցուցանել ընդդէմ պիղծ կոոցս
 Տէրունական խաչի զօրութիւն . . . :
- Քրմապետ.** Մեոցի
 Ուխտադրուժ կախարդ, Հայոց թշնամուհի,
 Զինչ հայույել թողուս:
Տրդատ. Ի բանդ ածիցէք.
 Եւ գծրդատ յետոյ առ պայլատ բերէք . . .
Քրմապետ. Տեսէք, զինչ կախարդդ արար:
 Երթիցոք որդիք 'ի յայլ տաճար,
 Զիրկութիւն ազգիս յերկնից խնդրել:
 Փութացի թագաւոր զարագործս սպանանել,
 Եթէ կամի ապրել յանկարծ մահուանէ:
 Իմ բան է ասել և հոդալ ձեր է:

ՏԵՍԱՐԱՆ Դ.

ԿԱՐԵՆ. ՏԻՄՈՅ.

- Կարեն.** Հոգալ զինչ պիտոյ է, մվ երկինք, ցուցէք.
 Զինչ պարտ է ճանապարհ ընտրել, ուսուցէք.
 Յամենայն կողմանց կարէն չարեքախտ է.
 Թէ մեոցի Հոկիսիմէ թէ մահապարտ կեցցէ.
 Զոր սիրեմ՝ մեոցի թողուլ չկարեմ.
 Թէ կեցցէ ասեմ՝ ինքն ամբարըշտեմ.
 Օգնականք, աստուածք, լեռուք:
- Տիմաս.** Եթէ զոհէր,
Կարեն. Որպէս երկընչէիր՝ ապա Տրդատայ էր:
Տիմաս. Զոհել ոչ պարտ էր. իսկ քան խորտակել
 Զկուռս և զտաճար՝ լաւագոյն էր զոհել:
 Որ սիրէ այսպէս, սակաւ, ասեմ, սիրէ.
 Թողութիւն արա. և աստուած սէր է.
 Թէ ամբարիշտ է կյան նորա տեսցին.
 Քրմապետ, թագաւոր, պատժեսցին, սպանցին:
 Առ քեզ անպատշաճ է՝ որ սիրող ես,
 Թէ անհաւատ իցէ զոր սիրես.
 Որ հաւատարիմ է 'ի սիրոյ յատեան՝
 Թէպէտ անաստուած իցէ՝ է բաւական:

Կարեն.

Տիմաս.

Կարեն.

Տիմաս.

Կարեն.

Տիմաս.

Կարեն.

Տիմաս.

Կարեն.

Տիմաս.

Լաւ ասես, Տիմաս, իսկ եթէ մեռցի

Զի՞նչ օգուտ է սէր իմ:

Է անհաւատալի:

Ակրէ զնա Տրդատ, ոչ՝ ի մահ տացէ,

Մի՛ երկընչիր, իշխան:

Ապա եթէ կեցցէ՝

Եւ իցէ Տրդատայ. զի չէ պիտոյ յուսալ.

Երդուաւ Արքայն ևս աստ դալ

Ընդ Հոռվմայեցիս, զերդմնւնս կրկնեաց

Ի վերայ խորանին և առաջի զօրաց,

Ի քրիստոսադաւանս ոչ երբեք խնայել:

Հորիսիմեայ փութով պիտոյ է ընտրել

Մահիճ կամ դահիճ. զբրիստոս ուրանալ,

Եւ կին արքային և դշնուհի կեալ.

Կամ՝ ի ձեռն զահճացն տանջեալ վախճանիլ.

Այս ասեմ բաւ է, նա չկարէ ապրիլ:

Ճամանակ ունելով, եթէ զքեզ սիրէ,

Շատ կարես առնել:

Սիրելի, այս է

Որ յուսահասէ զիս, միտ անփոփոխելի

Հաստատեալ ՚ի սէր իւրոյ Քրիստոսի,

Որում հարսնացեալ զինքն հանապազ կոչէ,

Զկայսր և զՏրդատ և զիս արհամարհէ.

Եւ ոչ ինչ կարէ զիստասիրտ շարժել.

Բայց զմահ վասն Քրիստոսի միայն ինդրել

Սիրեն, ըղձանալ հաղար անգամ ասէ . . . :

Առաջ քան զայլ ինչ ամենեին՝ պարտ է

Թէ սիրեացէ. ջանալ չէ գժուար՝

Ընդ նմա վախչիլ, և զիւրաբար

Բստ քոց կամաց զնա հաւանեցուցանել:

Բայց ով աստուած կարէ բոնադատել

Ջանձնիշխան կամն մարդոյ, և ուժով

Առնել թէ սիրեացէ, և վառել սիրով՝

Խիստ ատելութեամբ դսիրտ ցրտացեալ:

Որ ճշդրտի կամի զգործն ցանկացեալ՝

Կատարէ հանապազ:

Աստուածքն գիտեն

Աստուածքն գիտես, իշխան, շատ են.

Յամենայն ուրբեք ընդ աշխարհս սփուեալք,

Ի գեսս, յերկրի, ՚ի ջուրս ծածկեալք,

Ի ծով և ՚ի ցամաք, և ՚ի մէջ օդոյն,

Ի վերայ երկնից, յանդունդս գժոխոցն.

Յամենայն տեղի և ՚ի մէջ նոցա,

Որպէս ՚ի մէջ մեր՝ դատումն ևս կայ,

Տարբերք բնութեամբք են՝ ևս մտգք,

Սրտիւ, զիտութեամբ, կամգք.

Եւ զր սիրէ մին՝ միւսն աստուած ատէ,

Զոր արգելու այս՝ այդ հրամայէ,

Ըստ որում պատշաճի նոցա տէրութեան ,
Ըստ որում օդուտ է նոցա ցանկութեան :
Թողովք բացատրել մեր աստուածաբանից .
Յոյժ քննել զհաւաան՝ է բան անհաւատից :
Թէ որպէս բազում տերանց է ծառայել գժուար,
կարէ և երբեմն լինել մեղ օգտակար .
Զի եթէ զմեզ մին անփոյթ առնէ ,
Այլ ներհակ նմա զիսնզրուած չնորհէ ,
Եւ այս կերպիւ եթէ վիրնայինքն
Զքո մաղթանս անարգեն , լուիցեն ստորնայինքն .
Առ նոսա պարտ է քեզ , իշխան , ապաւինել ,
եթէ կամիս փութով ՚ի կուսէն սիրիլ:
Ոչ աստէն հեռի կին մի բնակէ
Նոցա պաշտօնեայ . ՚ի ժողովրդենէ:
Որպէս աստուածուհի լուեալ և պատուեալ ,
Որոյ գիտութեան հնազանդեցեալ
Աշխարհս ամենայն , նորա կամօք շարժի
կամ անշարժ մնայ . առ սոսկ զաւազանի
Զարկումն բարձրանայ ծով , երկիր դողայ ,
խաւարի արեգակն , լուսին անդրէն դաշնայ ,
Յանկարծ մըրիկի օդ և ամնդքն խառնակին ,
Անցյս ասաեղքն ՚ի բարձանց անկանին . . . :

Կարճառօտ , աղերսեմ , ասա . նա կարասցէ
Սիրոյ իմ օգնել:

Ճարակուսիլ մեղք է . . . :

Ապա լաւ է . առ նա փոյթ ընդ փոյթ վազել ,
Յառաջ քան զջրդատ կարասցէ գիտել :

Շարուհակելի

Ք Ե Ր Դ Ո Ւ Ա Ծ Վ

Ա Յ Ի Ն Կ Ա Ն Ո Ս Ե Ր Գ Զ Կ Կ Ա Ր Ն Ե Ց Ի Ո Յ



Տ Է Ր Ո Ւ Ա Կ Ա Ն Ք

Տ Է Ս Տ Ա Ն

Յ Ի Ս Ո Ւ Ս Ի Զ Ա Ր Զ Ա Ր Ա Ն Ա Յ Վ Ր Ա Յ

Մեր Փըրկչին ցաւալի չարչարանքներուն
Ժամանակն որ հասաւ , թիւն որ լըրացաւ ,
Խրեններովը շուտ ելաւ գիշերանց՝
Զիթենեաց լեռը ու կեղրոն ձորն անցաւ :